

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 10-ի N 231-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին»

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ

ՄԱՐՏԻ 10-Ի N 231-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 10-ի «Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերում (թվային տախտգրաֆներում) օգտագործվող քարտերի ձևերը և դրանց տրամադրման կարգը հաստատելու մասին» N 231-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N 2 հավելվածում (այսուհետ՝ Հավելված) մեջ կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները՝
 - Հավելվածը լրացնել նոր 5¹ կետով հետևյալ խմբագրությամբ.
«Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերը (թվային տախտգրաֆները) ներառված են Հայաստանի Հանրապետության 2016 թվականի փետրվարի 11-ի N 113-Ն որոշմամբ հաստատված օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկում և ենթակա են պարտադիր ստուգաչափման: Օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ստուգաչափումն իրականացվում է չափագիտության ազգային մարմնի և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստուգաչափման իրավունք ստացած իրավաբանական անձանց կողմից:»:
 - Հավելվածի 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «Միջպետական բեռնափոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցներում տեղադրված հսկիչ սարքերի (թվային տախտգրաֆների) ստուգում իրականացնող արեստանոցներն արհեստանոցի քարտ (ստուգում կատարելու թույլտվություն) ստանալու համար իրավասու մարմին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝»:
 - Ուժը կորցրած ճանաչել Հավելվածի 6-րդ կետի 4-րդ ենթակետն:

- Հավելվածը լրացնել նոր 6¹ կետով հետևյալ խմբագրությամբ.
«Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերի (թվային տախտգրաֆների) ստուգումն իրականացվում է իրավասու մարմնի կողմից ստուգման և վերանորոգման իրավունք ստացած մարմնի կողմից:»
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: